

# Մանօթանանք Օնթարիոյի

## ԴՐԱՄ ԵՒ ԱՆՁՆԱԿԱՆ ԵԼԵԻՄՈՒՏՔ

### ԴՐԱՄՍՏՈՒՆԵՐ ԵՒ ԱՊԱՌԻԿԻ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ (CREDIT UNIONS)

Դրամատուները եւ ապառիկի միութիւնները կը ներկայացնեն շատ մը ֆինանսական ծառայութիւններ:-

- Վճարագրեր (Chequing) և խնայողական հաշիւներ (savings accounts)
- Հաշուեքարդեր (Debit cards) մտնելու ձեր հաշիւներուն դրամատնային մեքենաներով (կը կոչուին Automated Teller Banking Machines կամ ATMs/ABMs) և Interac վաճառային գնումներուն (Interac point-of-sale purchases)
- 24-ժամ ինթըրնէթի և հեռախօսային դրամատան գործեր
- Վարկային քարդեր (credit cards), ապառիկի չափը (lines of credit), պարտքի դրամ (loans), գրաւով կալուածի պարտքեր (mortgages)
- Ներդրումի (Investment) արտադրանքներ և դրամական ծրագրեր

Շատ դրամատուներ եւ ապառիկի միութիւններ (credit unions) կը պահանջեն ամսական վճար իրենց ծառայութիւններուն համար, բայց և այնպէս կան դրամատուներ որոնք կը ներկայացնեն առանց վճարի ընտրութիւններ: Հարցուցէք դրամատան վճարներուն մասին հաշիւ բանալէ առաջ: Կարիք պիտի ունենաք երկու ինքնութեան փաստաթուղթեր ցոյց տալու:- մէկը որ ունի ձեր լուսանկարը եւ ստորագրութիւնը եւ միւսը որ ցոյց կու տայ ձեր հասցէն:

### ԱՊԱՌԻԿ (CREDIT)

Վարկային քարդերը (credit cards) եւ փոխառութիւնները (loans) ապառիկի ամէնէ ընդհանրացած ձեւերն են: Երբ կը գործածէք ապառիկ, պիտի վճարէք տոկոս փոխատուին (տվորաբար դրամատուն կամ Վարկային քարդի ընկերութիւն): Տոկոսին գինը ամբողջ փոխ առնուած գումարին որոշ հարիւրերորդն է:

Որքան շատ ժամանակ առնէ ձեր պարտքը վճարելը, այդքան շատ տոկոս պիտի վճարէք: Կարդացէք (Welcome to Canada) ուղեցոյցը, աւելի գիտնալու տարբեր տեսակի ապառիկներու եւ պարտքերու մասին [www.cic.gc.ca](http://www.cic.gc.ca) կամ [findlink.at/welcomecan](http://findlink.at/welcomecan)

Ձեր վարկի պատմութիւնը ձեր անցեալի պարտքերու, ապառիկներու և վճարումներու արձանագրութիւնն է: Մարդոց մեծամասնութիւնը կը սկսին իրենց վարկային պատմութիւնը հիմնել վարկային քարդի միջոցաւ: Վարկի պատասխանատու գործածութիւնը ցոյց կու տայ դրամատուին որ դուք լաւ յաճախորդ մըն էք պարտքի դրամ առնելու: Խօսեցէք մէկու մը հետ ձեր դրամատան մէջ նոր եկողներու վարկային քարդի ծրագիրներու մասին:

Յաւելեալ տեղեկութիւններու համար, այցելեցէք Financial Consumer Agency of Canada - [www.fcac-acfc.gc.ca](http://www.fcac-acfc.gc.ca)

Տեղեկութիւններու համար խարդախութեան եւ ինքնութեան գողութեան մասին, կարդացէք Industry Canada-ի սպառողի գրքոյկը (Consumer Handbook) առցանց (online), [www.consumerhandbook.ca](http://www.consumerhandbook.ca) կամ [findlink.at/CCHanbook](http://findlink.at/CCHanbook)

1-855-626-0002  
[www.orientationontario.ca](http://www.orientationontario.ca)



## ՏՈՒՐՔԵՐ

Գառավարությունները Գանատայի մեջ կ'օգտագործեն տուրքերը վճարելու հասարակական ծառայություններու եւ ենթակառուցող համար, ինչպէս առողջապահություն, դպրոցներ եւ մայրուղիներ: Տուրքերու տարբեր տեսակներու բացատրութեան համար, այցելեցէք Ministry of Finance - [www.fin.gov.on.ca](http://www.fin.gov.on.ca) կամ [findlink.at/Finance](http://findlink.at/Finance)

**Եկամուտի տուրք** - Եթէ դուք Գանատայի մշտաբնակ էք, պէտք է ներկայացնէք եկամուտի տուրքի հաշուեթուղթը ամէն տարի, Canada Revenue Agency (CRA)-ի հետ:

Աշխատողներու մեծամասնութեան տուրքերը կը գանձուին իրենց գործի վճարագրերով (paycheque) - պայմանագրով աշխատողները եւ ազատ աշխատողները պէտք է վճարեն իրենց տուրքերը անձամբ:

Շատ մարդիկ ետ կը ստանան դրամը (CRA)-էն ներկայացնելէ ետք իրենց եկամուտի տուրքի հաշուեթուղթը եւ կը պահանջեն ձեռնտու վճարներ և ծախսեր. Ֆետերալ տուրքի հաշուեթուղթերը նաեւ կը ներառեն բաժին մը գաւառական եկամուտի տուրքի համար: Կարող էք ստանալ անվճար օգնություն լեցնելու ձեր հաշուեթուղթը (Community Volunteer Income Tax Program) հասարակական կամաւորական եկամուտի տուրքի ծրագրին միջոցաւ:

Յաւելեալ տեղեկություններու համար, այցելեցէք Canada Revenue Agency (CRA) [www.cra-arc.gc.ca](http://www.cra-arc.gc.ca) կամ [findlink.at/incometax](http://findlink.at/incometax)

**Օախելու տուրք** - Բոլոր սպառողները Օնթարիոյի մէջ կը վճարեն համապատասխանուած ծախելու տուրք (Harmonized Sales Tax (HST)) սպառողական ապրանքներու եւ ծառայություններու համար: Անհրաժեշտ առարկաները, ինչպէս նպարեղէն, շորիկներ եւ մանուկներու հագուստեղէն տուրք չ'ունին: Օնթարիոյի համապատասխանուած ծախելու տուրքը (HST) ծախու գինին 13% տոկոսն է: Օնթարիոյի բնակիչները որոնք ունին քիչ կամ համեստ եկամուտներ ետ կը ստանան փոքր բաժին մը HST-էն, (Canada

Revenue Agency) CRA-էն: Կարող էք HST դրամի դիմել ձեր տարեկան եկամուտի տուրքի հաշուեթուղթով: Վճարումի գումարները կախեալ են ձեր եկամուտի մակարդակէն:

Յաւելեալ տեղեկություններու համար HST credit-ի մասին, այցելեցէք [www.cra-arc.gc.ca](http://www.cra-arc.gc.ca) կամ <http://findlink.at/GST-HST>

### Սեփականութեան տուրքեր -


Կալուածատէրերը պէտք է տուրք վճարեն իրենց քաղաքապետարանին: Քաղաքային կառավարությունը կ'որոշէ այս տուրքին սակը եւ գումարը որոնք կը հիմնուին սեփականութեան արժեքին համեմատ: Եթէ դուք վարձէք ձեր տունը կամ գործը, ստիպուած չ'էք վճարելու սեփականութեան տուրք, բայց սեփականութեան տուրքին արժեքը մաս մըն է որոշուած վարձի սակէն:

## ՏՈՒՐՔԻ ՎԱՐԿԵՐ և ՕԳՈՒՏՆԵՐ

Օնթարիոյի բնակիչներուն համար կան եկամուտի շատ օգնություններ, հիմնուած անոնց եկամուտի տուրքի հաշուեթուղթին վրայ, ինչպէս համապատասխանուած ծախելու տուրքը (HST) ետ դառննելը: Կարելու է ներկայացնել եկամուտի տուրքի հաշուեթուղթը, նոյնիսկ եթէ դուք եկամուտ չ'ունիք:

Երեք կարելու վարկերը կը ներառեն աշխատելու եկամուտի տուրքի օգուտ (Working Income Tax Benefit (WITB)), Գանատայի մանուկի տուրքի օգուտ (Canada Child Tax Benefit (CCTB)) եւ մանուկի խնամքի ընդհանուր նպաստ (Universal Child Care Benefit (UCCB)): (WITB) եւ (CCTB) ձեր եկամուտի վրայ հիմնուած են: (UCCB) ամսավճար մըն է վեց տարեկանէ վար մանուկներու համար: Նշենք թէ ձեր ամուսինը/կինը կամ ընդհանրացած-օրէնքի ընկերը/ընկերուհին նաեւ պէտք է ներկայացնէ եկամուտի տուրքի հաշուեթուղթը ամէն տարի իրաւունք ունենալու տուրքի վարկերու եւ ուրիշ օգուտներու:

Յաւելեալ տեղեկություններու համար տուրքի վարկերու եւ օգուտներու, այցելեցէք Canada Revenue Agency - [www.cra-arc.ca](http://www.cra-arc.ca) կամ [findlink.at/cra-bnfts](http://findlink.at/cra-bnfts)



### Կարելու նշում

*Պաշտպանեցէք ձեր ինքնութիւնը գործածելով Օնթարիոյի վարորդի արտօնագիր կամ լուսանկարով անձարարդ:*

*Մի գործածէք ձեր հասարակական ապահովագրութեան թիւը:*

